Հնդկաստանը Իրանին կապում է իր հետ՝ առանց հաշվի առնելու Միացյալ Նահանգներին

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 18.05.2024 թ.

13.05.2024 թ. Իրանը և Հնդկաստանը 10 տարվա պայմանագիր են ստորագրել Նյու Դելիի կողմից իրանական Չաբահար նավահանգիստը կառավարելու վերաբերյալ: Ստորագրող կողմերն էին *Indian Port Global Ltd. & Ports ընկերությունը* և ԻԻՀ-ի պետական ծովային կազմակերպությունը: *The Economic Times-ի* հնդկական հրատարակությունը համարում է, որ սա «*էական աշխարհաքաղաքական քայլ է Իրանի նկատմամբ, որը նշանակալի ազդեցություն կունենա տարածաշրջանի վրա»:* Հրապարակման համաձայն՝ այս համագործակցությունը զարգացման խթան կհանդիսանա Աֆղանստանի, Կենտրոնական Ասիայի և Եվրոպայի հետ Հնդկաստանի կապերի համար՝ շրջանցելով Պակիստանը: Ըստ *The Economic Times-ի*՝ *«սա առաջին դեպքն է, երբ Հնդկաստանը կստանձնի արտասահմանյան նավահանգստի կառավարումը»:* Նյու Դելին ակնկալում է նաև, որ նախագիծը կբարելավի երկրի կապը Հյուսիս–Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի հետ, որը մշակվում է Իրանի և Ռուսաստանի հետ համատեղ:

Իրանական կողմն, իր հերթին, 10 տարվա պայմանագիրը նույնպես որակել է որպես երկրի համար մեծ հաջողություն և բարձր գնահատել Նյու Դելիի հետ համալիր փոխհարաբերությունները: Այս առիթով Իրանի արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահյանն ասել էր, որ Իրանը համարում է, որ «*Հնդկաստանը վստահելի գործընկեր է*»:

Այսպիսով, Չաբահարի զարգացման համատեղ նախագիծը, որի մեկնարկը տրվել էր դեռևս 2015-2016 թթ., թևակոխում է նավահանգստի օբյեկտների համապարփակ գործարկման և դրա բոլոր ենթակառուցվածքների շահագործման փուլ, որոնցում հնդկական կողմը կատարել է բազմամիլիարդանոց ներդրումներ: Գործընթացն սկսվեց՝ չնայած ԱՄՆ-ի բոլոր զգուշացումներին՝ ԻԻՀ-ի նկատմամբ Արևմուտքի կողմից կիրառվող պատժամիջոցների տրամաբանությանը հակասող Իրանի հետ տնտեսական համագործակցության անթույլատրելիության մասին: Հնդկաստանը նախընտրեց չշեղվել իր ընտրած ուղուց՝ Իրանին ներառելով ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի հետ առևտրային և էներգետիկ հաղորդակցության մեգանախագծում, որը դարձել է չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» գլոբալ ծրագրի հիմնական մրցակիցը: Պետք է ենթադրել, որ հենց այս մրցակցության գործոնը վստահություն է ներշնչում Նյու Դելիին այն բանում, որ Չինաստանի քաղաքական և տնտեսական թուլացմամբ գոյութենական իմաստով շահագրգռված Միացյալ Նահանգները Իրանի հետ սերտ փոխգործակցության պատճառով, գործնական առումով, չի դիմի Հնդկաստանի վրա ճնշում գործադրելուն:

Մայրցամաքային առևտրի առաջատարի համար մրցակցության մեջ Վաշինգտոնի համար, իրոք, շահեկան է չինացիների նկատմամբ հնդկական երթուղու առավելությունը, սակայն ԱՄՆ-ը մի փոքր այլ կերպ էին պատկերացնում Նյու Դելիի առաջնային դերը: Ժամանակին Հնդկաստանին առաջարկվել էր իր հիմնական լոգիստիկ հաղորդակցությունը դեպի Եվրոպա ոչ թե Իրանի, այլ արաբական երկրների և Մերձավոր Արևելքի միջով անցկացնելու այլընտրանքային տարբերակ: Դեռևս 2023 թ. հոկտեմբերին, Նյու Դելիում կայացած G20-ի գագաթնաժողովի շրջանակներում, Միացյալ Նահանգները համաձայնություն ձեռք բերեցին Հնդկաստանի հետ խորհրդակցություններ սկսել Հնդկաստան–Մերձավոր Արևելք–Եվրոպա՝ ներառյալ Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն և իր աշխարհագրության մեջ գտնվող, տարածաշրջանում ԱՄՆ-ի դաշնակիցներից այլ երկրներ, նոր տրանսպորտային և էներգետիկ երթուղու մշակման վերաբերյալ: Այս այլընտրանքային ծրագրի անվտանգությունն ու շահութաբերությունը երաշխավորելու համար Վաշինգտոնը խոստացել է Նյու Դելիին լուծել տարածաշրջանում առկա հակասություններն ու հակամարտությունները: Խոսվել է, նախ, Էր Ռիադի՝ Իսրայելի անկախության ճանաչման հնարավորության մասին, որը մեկնարկային կետ կդառնա պաղեստինա–իսրայելական հակամարտության և տարածաշրջանում ուղեկցվող հակասությունների լուծման համար:

Հնդկաստանը չի մերժել ամերիկյան առաջարկները, սակայն ստորագրված հուշագրից բացի դեռևս ոչինչ չի արվել: Պատճառը Մերձավոր Արևելքում նոր արյունալի պատերազմն էր, որը բռնկվեց հենց այն օրերին, երբ Ջո Բայդենը Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիին համոզեց Իրանը շրջանցող երթուղու հեռանկարների շուրջ:

Ըստ ամենայնի, Նյու Դելին պատրաստ է շարունակելու ամերիկյան առաջարկների իրականացման հնարավորությունների քննարկումը: Սակայն դա չի նշանակում, որ նա կսպասի այնքան, մինչև ԱՄՆ-ը կարողանա կատարել իր ստանձնած պարտականությունները՝ առաջարկվող այլընտրանքային ճանապարհի աշխարհագրական տարածքում կայունություն և խաղաղություն հաստատելու համար: Հետևաբար, իրանական ուղղությունը, ըստ երևույթին, մնում է առաջնահերթություն և դեռ ամենաանվտանգը Հնդկաստանի հավակնոտ ծրագրերի համար, և արագ զարգացող այս երկիրը քայլ առ քայլ Իրանին կապում է իր՝ դեպի եվրասիական մայրցամաք տնտեսական ընդարձակման լոգիստիկ ծրագրին: